ի զօրապետացն ապատամբեցան 'ի նմանէ՝ և բազում աշխարհաց արևմտից տիրեցին, և զամենայն հարկան թագաւորին իւրեանց առին, և բազում անձինս կոտորեցին, և տիրեցին բոլոր Իտալիոյ ԺԲ. տարի։ Վասն Լևոնի՝ ասեն՝ 'ի յաղգէն Հայոց լինել, և էր՝ ասեն՝ տեղեաւ Մծբնեցի և աղքատ շինական. և յաւուր միում մինչ աշխատեալ էր և ննջեալ 'ի ներքոյ ծառի միում, եկին առ նա արք երեք Հրեայք, և խիթեալ զնա՝ ասեն, ընդէր յանհոգս ննջես թագաւոր աշխարհի։ Եւ նա զարթուցեալ՝ ասէ, զի՞ է, զի՞ ասացիք ինձ շինականիս թագաւոր։ Եւ նոքա՝ ասեն, մեք որդիք մարգարէից եմք և Աստուած յայտնեաց մեզ վասն քո՝ որ թագաւոր լինելոց ես։ Երդ՝ արի՛ և գնա՛ 'ի Կոստանդնուպօլիս. բայց ուխտեա՝ Աստուծոյ, զի յայնմ ժամուն՝ յորում թագաւորեսցես, զոր ինչ հրաման լեցի քեզ Աստուծոյ՝ 'ի մէնջ ուեալ՝ կատարեսցես, զի հաստատեսցի թագաւորութիւն քո։ Եւ սորա գնացեալ

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան